Մութը բոլորովին պատել էր, երբ մենք վերադարձանք ուխտաւորների բանակը: Թէ Սօնան եւ թէ ես այն աստիճան խռովուած էինք, որ մեր մէջ ուրիշ խօսակցութիւն չեղաւ: Լուռ իմ կողքով գնում էր Սօնան: Խե՜ղճ աղջիկ, նա միանգամից կորցնում էր երկու մխիթարութիւն՝ իր հարազատ եղբօրը, որին պէտք է թողնէր վանքի «խեղճերի» մէջ, եւ այն տղամարդին, որին սիրում էր, որի ձեռքը բռնած, գնում էր այժմ :

Երբ մենք մօտեցանք ուխտաւորների բանակին, նա ասաց.

— Դու ինձ հասցրու մինչեւ մեր տիրացու Թաթոսի վրանը եւ հեռացիր:

— Նա՞ էլ այստեղ է, — հարցրի ես:

— Այստեղ է, ուխտ է եկած իր կնոջ եւ ազգականների հետ:

— Միթէ՞ նա այժմ կին ունի:

— Մի քանի ամիս է, ինչ որ պսակոել է, միտք ունի շուտով քահանայ դառնալու:

— Հէնց ես մնացի առանց կնոջ, ամէնքը պսակոեցան...

— Քեզ էլ աստուած ողորմած է... — պատասխանեց Սօնան, խորհրդաւոր ձայնով. եւ այն, ժամանակ միայն ես նկատեցի, որ ժպիտի նման մի բան շողաց նրա տխուր դէմքի վրայ:

Տիրացու Թաթոսն արդէն ծանօթ է մեր յիշատակարանի մէջ նրա սկզբից: Այս տխմարը մի ժամանակ մեր դպրոցի վերակացուն էր, աշակերտները նրան կոչում էին «դպրոցի շուն». այժմ նա ամուսնացած էր եւ շուտով պէտք է քահանայ դառնար... արդեօք, արժա՞ն էր այդ պատոին...

Հասցնելով Սօնային տիրացու Թաթոսի վրանը, ես հեռացայ:

## ԼԷ. ԴԻՄԱԿԸ ՊԱՏՌՈՒՈՒՄ Է

Գիշերից բաւական անցել էր. ես իմ մտածութեանց մէջ բոլորովին մոլորուած, չգիտէի թէ ուր գնամ: Սօնայի հաղորդած տեղեկութիւներն ինձ բոլորովին շփոթել էին: Մէկ էլ տեսնեմ, առաջս կտրեց իմ քեռի Պետրոսը:

— Ե՜կ, — ասաց նա ծանր կերպով, — ե՜կ, մոլորեալ ոչխար, գնանք ինձ մօտ, քեզ հետ խօսելիք ունեմ:

Ես հետեւեցի նրան ամենայն խոնարհութեամբ, որովհետեւ երեխայութիւնից սովորած էի նրան իբրեւ հայր ճանաչել: Նա ինձ տարաւ իր վրանը, կնոջը եւ միւսներին հրամայեց գնալ դրացիների մօտ, եւ առանձին ինձ հետ սկսեց խօսել: Նրա խօսքերը դարձեալ վերաբերում էին ծերունի որսորդին,